ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/56

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.02.2022թ. թիվ 26/26-1/2326-2022 գրությամբ «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի 03.02.2022թ. թիվ 1/500-2022 գրության հիման վրա, 10.02.2022թ. թիվ 26/26-1/2326-2022 գրությամբ նախաձեռնել է «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ն, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 22.02.2022թ. գրությամբ, հայտնել է հետևյալը.

1. Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

ՀՀ Ազգային ժողովը (այսուհետ նաև Պատվիրատու) իր կարիքների համար տնտեսական և սանիտարահիգիենիկ ապրանքների ձեռքբերման նպատակով 16.12.2021 թվականին հրապարակել է թիվ «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/3» էլեկտրոնային աճուրդը (այսուհետ նաև գնման ընթացակարգ):

Գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև Մասնակից):

Գնման ընթացակարգին 4-րդ և 9-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերությունը:

Պատվիրատուն վերոհիշյալ չափաբաժինների վերաբերյալ պայմանագիր կնքելու առաջարկությունը Մասնակցին ուղարկել է 14.01.2022 թվականին:

Մասնակիցը ստորագրված պայմանագիրը, որակավորման ապահովումը և տուժանքի մասին համաձայնությունները (այսուհետ նաև Փաստաթղթեր) Պատվիրատուին ներկայացրել է 01.02.2022 թվականին, փաստացի՝ սահմանված ժամկետից մեկ աշխատանքային օր ուշացմամբ:

Մասնակցի կողմից Պատվիրատուին փաստաթղթերը ուշ ներկայացնելը պայմանավորված է եղել պատասխանատու աշխատակցի՝ Սրբուհի Ալբերտի Պետրոսյանի անաշխատունակության մեջ գտնվելու հանգամանքով, ով հանդիսանում էր Մասնակից Ընկերությունում գնման ընթացակարգերի համակարգման մասնագետ և ուներ COVID 19 հիվանդության ախտորոշում և մեկուսացված էր դեռևս 01.02.2022 թվականի դրությամբ:

Պատվիրատուն հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրավերով սահմանված ժամկետում Փաստաթղթերը չեն ներկայացվել, 01.02.2022 թվականի թիվ 3 արձանագրային որոշմամբ Մասնակցին զրկել է պայմանգիր կնքելու իրավունքից և ի թիվս այլնի՝ չեղյալ է հայտարարել Գնման ընթացակարգի 4-րդ և 9-րդ չափաբաժինները:

2. Գործի փաստական և իրավական հիմնավորումները.

Գնումների մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդված 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) կարգի 45-րդ կետի համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝

1. Պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

2. Մեղքի բացակայությունն ապացուցում է պարտավորությունը խախտած անձը:

3. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝

տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը:

4. (...):

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը Գնման ընթացակարգերի շրջանակում սահմանել է պայմանագրի կնքման համար հստակ ժամկետներ պայմանագիր կնքելու ծանուցումը ստանալուց հետո 10 աշխատանքային օր միևնույն ժամանակ սահամնելով դրա չկատարման արդյունքում պայմանագիրն ստորագրելու իրավունքից զրկելու հնարավորություն: Սունի համատեքստում պետք է փաստել, որ Պատվիրատուի կողմից պայմանագիր կնքելու ծանուցմանը առկայության դեպքում Մասնկցի մոտ ծագում է հանդիպական պարտավորություն այն 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրելու և Պատվիրատուին ներկայացնելու համար, և այդ ժամկետը ինքնին հանդիսանում իրավադադարեցնող ժամկետ, քանզի դրա խախտումը հանգեցնում է պայմանագիր կնքելու իրավունքից զրկելուն, այսինքն որոշակի իրավական հետևանքների վրա հասնելուն:

Պարտավորության պատշաճ չկատարման դեպքերում օրենսդիրը սահմանել է նաև պատասխանատվությունից ազատվելու իրավական հնարավորություններ երբ բացակայում է պարտավորությունը խախտած անձի մեղքը, այդ թվում նաև այն դեպքերում երբ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով:

Օրենսդիրը Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են՝ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն մասնակցի կողմից ստանձնած

պարտավորությունների խախտման դեպքում է նոր միայն առկա նրան գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր, ավելին նշված պարագայում առկա է նաև պարտադիր վավերապայման պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի պարագայում նոր միայն որպես հետևանք նախատեսված պատասխանատվության միջոց: Իսկ եթե առկա են պարտավորության խախտման համար մեղքի բացակայության հիմքեր, ապա վերանում են նաև հետևանքները՝ պատասխանատվության միջոցները, իսկ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, որ Մասնակիցը սույն դեպքում ունենալով Գնման ընթացակարգի 4-րդ և 9-րդ չափաբաժինների վերաբերյալ Պատվիրատուի ծանուցումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու և Պատվիրատուին ներկայացնելու պարտավորություն այն կատարել է սահմանված ժամկետի խախտմամբ, սակայն այդ մասով բացակայել է Մասնակցի մեղավորությունը առկա անհաղթահարելի ուժի հետևանքով: Ըստ էության կնքված պայմանագիրը, որակավորման ապահովումը և տուժանքի վերաբերյալ համաձայնությունը Մասնակցիը Պատվիրատուին է ուղարկել 01.02.2022 թվականին մեկ աշխատանքային օր խախտումով, այսինքն այս դեպքում ոչ թե գործ ունենք պարտավորության չկատարման հետ՝ ինչպես նշել է Պատվիրատուն, իր 01.02.2022 թվականի թիվ 3 արձանագրային որոշմամբ, այլ անպատշաճ կատարման հետ, ուստի քննարկման առարկա պետք է դարձվի այն հանգամանքը, թե՞ արդյոք Մասնակցի կողմից Փաստաթղթերը Պատվիրատուին սահմանված ժամկետի խախտմամբ չներկայացնելու մեջ առկա է արդյոք Մասնակցի մեղքը, թե՞ ոչ և դրանով պայմանավորված կարող են արդյո՞ք վրա հասնել պատասխանատվության հիմքեր, որի արդյունքում Մասնակիցը կզրկվի պայմանագիր կնքելու իրավունքից:

Պայմանավորված այն հանգամանքով, որ Մասնակից Ընկերությունում գնման ընթացակարգերի համակարգման մասնագետ՝ Սրբուհի Ալբերտի Պետրոսյան գտնվել է անաշխատունակության մեջ, պայմանավորված COVID 19 հիվանդությամբ և դեռևս 01.02.2022 թվականի դրությամբ գտնվել է մեկուսցման մեջ և եղել է վատառողջ, ուստի այդ հետևանքների վերացնելը եղել է անհնարին, իսկ Մասնակից Ընկերության գնման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվությանը և կատարվելիք պարտավորությունների

հստակ ժամկետներին տեղյալ է եղել միայն տվյալ աշխատակիցը, ում բացակայությունը խոչընդոտել է պատշաճ կատարել սույն դեպքում առկա պարտավորությունը: Չնայած այդ ամենին Մասնակից Ընկերությունը ձեռնարկել է իրենից կախված ամեն ինչ և տեղեկանալով ժամկետների մասին անմիջապես ուղարկել է անհրաժեշտ Փաստաթղթերը Պատվիրատուին, իսկ գնման ընթացակարգերին մասնակցելու հայտերը բազմաթիվ են, ուստի դրանց տիրապետող անձի վատառողջ լինելը հանգեցրել է անհաղթահարելի իրավիճակի: Նշվածով պայմանավորված գտնում եմ, որ նախ Մասնակից Ընկերության կողմից ոչ թե՞ չեն կատարվել պարտավորությունները, այլ դրանք կատարվել են անպատշաճ, որի մեջ բացակայում է Ընկերության մեղքը, ուստի, չեն կարող վրա հասնել պատասխանատվության հետևանքներ, ուստի պայմանավորված վերոգրյալով գտնում եմ, որ առկա են Մասնակցի կողմից բացթողնված ժամկետը հարգելի համարելու իրավական և փաստական հիմքեր, միևնույն ժամանակ տեղեկացնեմ, որ թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/17 ընթացակարգի շրջանակում վիճարկվում է թիվ «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 01.02.2022 թվականի թիվ 3 արձանագրությունը, որը հենց հանդիսանում է թիվ «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերության մասնակցության դադարեցման փաստական հիմք, որի վերացմամբ վերացվում է նաև «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավական և փաստական հիմքերը: Հաշվի առնելով նշվածը միջնորդում եմ սույն գործի քննությունը հետաձգել մինչև թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/17 ընթացակարգի շրջանակում որոշման կայացումը:

Միևնույն ժամանակ միջնորդում եմ Պատվիրատուից պահանջել ներկայացնել տեղեկատվություն այն մասին թե «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերությունը և էլեկտրոնային և թղթային եղանակով երբ է ներկայացրել կնքված պայմանագիրը և որակավորման ապահովումն ու տուժանքի մասին համաձայնությունը, որով կհաստատվի, ոչ թե՞ «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերության կողմից պայմանագիր չկնքելու՝ այն է ստանձած պարտավորությունը չկատարելու այլ այն ուշացումով կատարելու հանգամանքը, որը եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունքում, քանզի «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերությունում գնումների գործընթացի համակարգման գործառույթներ իրականացնող աշխատակիցը եղել է COVID19 հիվանդությամբ վարակված և անաշխատունակության ժամկետի ավարտից հետո 8-րդ ինֆեկցիոն բաժանմունքի կողմից տրված էպիկրիզի համաձայն պետք է գտնվեր ինքնամեկուսացման մեջ նույնիսկ դրանից հետո:

Ուստի պայմանավորված վերոգրյալով Խնդրում եմ՝ մերժել «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարության նախաձեռնությունը»:

«Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/56 ընթացակարգի շրջանակներում 16.02.2022թ. ժամը 09:20-ին և 23.02.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ԱԺ աշխատակազմը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 03.02.2022թ. թիվ 1/500-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Կից ներկայացնում ենք ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի մասնակից «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու հիմնավորումը՝ կից հիմքերով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/56 ընթացակարգի շրջանակներում 16.02.2022թ. ժամը 09:20-ին և 23.02.2022թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/56 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/56 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից իր կարիքների համար տնտեսական և սանիտարահիգիենիկ ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 30.12.2021թ. նիստի ընթացքում որոշում է կայացվել «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ին 4-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը eauction.armeps.am համակարգի միջոցով 14.01.2022թ. ծանուցել է «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.02.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը, ինչպես նաև պատվիրատուին չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները և որոշում կայացրել Ընկերությանը պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու վերաբերյալ:

5. **<u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.02.2022թ. թիվ 26/26-1/2326-2022 գրությունը, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի 03.02.2022թ. թիվ 1/500-2022 գրությունը և կից փաստաթղթերը, ինչպես նաև «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,</u>

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված

մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Որակավորման ապահովում չի ներկայացվում, եթե ընտրված մասնակիցը կամ տվյալ ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերպությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor's) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով: Եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը՝

- չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի տասնհինգ, իսկ գերազանցելու դեպքում՝ երեսուն տոկոսին.

- չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, բացառությամբ շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների, որոնց դեպքում ապահովումը ներկայացվում է սույն պարբերությամբ նախատեսված երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով.

- գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքների կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, ՀՀ ազգային ժողովի աշխատակազմի կողմից իր կարիքների համար տնտեսական և սանիտարահիգիենիկ ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.12.2021թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ 30.12.2021թ. նիստի ընթացքում որոշում է կայացվել «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ին 4-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը eauction.armeps.am համակարգի միջոցով 14.01.2022թ. ծանուցել է «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.02.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը, ինչպես նաև պատվիրատուին չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները և որոշում կայացրել Ընկերությանը պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու վերաբերյալ:

«Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ն ներկայացրել է միջնորդություն ՍՑ-ՆԳ-2022/56 ծածկագրով ընթացակարգի քննությունը հետաձգելու մինչև թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/17 ընթացակարգի շրջանակում որոշման կայացումը, որով որպես հիմնավորում նշել է, որ առկա են վերջինիս կողմից բացթողնված ժամկետը հարգելի համարելու իրավական և փաստական հիմքեր և թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/17 ընթացակարգի շրջանակում վիճարկվում է թիվ «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 01.02.2022 թվականի թիվ 3 արձանագրությունը, որը հենց հանդիսանում է թիվ «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ի մասնակցության դադարեցման փաստական հիմք, որի վերացմամբ վերացվում է նաև «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավական և փաստական հիմքերը:

Ներկայացված միջնորդությունը բավարարվել է:

Այսպիսով՝ «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 07.02.2022թ. ներկայացրել է բողոք, որով Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել թիվ «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողին մասնակի փոփոխելու 01.02.2022թ. թիվ 3 արձանագրությունը և վերացնելու՝

1. «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ին 4-րդ և 9-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու մասին որոշումը,
2. 4-րդ և 9-րդ չափաբաժինները չկայացած հայտարարելու մասին որոշումը:

Ընկերության կողմից

Ընկերության կողմից ներկայացված վերը նշված բողոքը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կողմից 04.03.2022թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/17 որոշմամբ ամբողջությամբ մերժվել է՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Մասնավորապես՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նշված իրավապարտադիր որոշմամբ արձանագրել է հետևյալը.

««Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից Բողոքներ քննող անձին ներկայացված 12.08.2021թ.-ի թիվ Ա-02/21 հրամանի համաձայն՝ 15.08.2021թ.-ից Սրբուհի Ալբերտի Պետրոսյանին հանձնարարվել է կատարելու գնումների գործընթացի համակարգման գործառույթները: «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ի 8-րդ ինֆեկցիոն բաժանմունքի կողմից Սրբուհի Ալբերտի Պետրոսյանին տրված էպիկրիզի համաձայն՝ վերջինս հիվանդացել է COVID 19 վարակով 06.01.2022թ.-ին, թեստավորվել է 11.01.2022թ.-ին և ընդունվել է բուժման, իսկ 20.01.2022թ.-ի դուրս է գրվել լավացումով: Նույն անձին տրված անաշխատունակության թերթիկի համաձայն՝ վերջինիս անաշխատունակության ժամանակահատվածի սկիզբ է համարվում 11.01.2022թ.-ը, իսկ վերջը՝ 20.01.2022թ.-ը:

(...)

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից բողոքի քննության ընթացքում ներկայացված՝ «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի գնումների գործընթացի համակարգման գործառույթները իրականացնող աշխատակից Սրբուհի Ալբերտի Պետրոսյանի COVID 19 հիվանդությամբ վարակված լինելու արդյունքում անաշխատունակ լինելու և այդ անաշխատունակության արդյունքում առաջացած անհաղթահարելի ուժի ազդեցությամբ պայմանավորված Պատվիրատուի կողմից ներկայացված պայմանագիրն օրենսդրությամբ սահմանված ժամկետում չստորագրելու հանգամանքին, ապա, տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Սրբուհի Ալբերտի Պետրոսյանի COVID 19 հիվանդությամբ վարակված լինելու արդյունքում անաշխատունակ լինելու հանգամանքը չէր կարող հիմնավոր պատճառ լինել պայմանագիրը սահմանված ժամկետում չստորագրելու համար, քանի որ վերջինս COVID 19 վարակով ընդունվել է բուժման 11.01.2022թ.-ին, իսկ 20.01.2022թ.-ի դուրս է գրվել լավացումով՝ անաշխատունակության մեջ գտնվելով 20.01.2022թ.-ը ներառյալ, որպիսի պայմաններում վերջինս 21.01.2022թ.-ից 31.01.2022թ.-ը ներառյալ հնարավորություն ուներ ստորագրելու պայմանագիրը:

(...)

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, գնահատելով ու հետազոտելով գործում առկա ապացույցները՝ Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրակացության, որ «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ն, որպես ընտրված մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չստորագրելով պայմանագիրը թույլ է տվել Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին և 36-րդ հոդվածի 3-րդ մասերով սահմանված դրույթների խախտում, իսկ գնահատող հանձնաժողովի կայացված որոշումները բխում են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից, որպիսի պայմաններում «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:»:

Թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/17 որոշմամբ արձանագրվել է, որ «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից eauction.armeps.am համակարգի միջոցով պայմանագիրը ստորագրվել է 01.02.2022թ.-ին:

Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվում է, որ ***<u>Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է</u>, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:***

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի 26-րդ կետի համաձայն՝ ***Անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:***

Նույն կարգի 27-րդ կետի համաձայն՝ ***Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:***

Վերոնշյալ իրավական կարգավորումների և փաստական հանգամանքների հիման վրա արձանագրում եմ, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած և չվերացված որոշումն ունի համապարտադիր բնույթ, իսկ նախկինում քննված՝ չվերացված որոշմամբ հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս կրկին ապացուցման ենթակա չեն, դրանք այն փաստական տվյալներն են, որոնք հետազոտման և գնահատման ենթակա չեն և ունեն ապացուցողական ուժ:

Այսպիսով՝ Ընթացակարգի 9.3-րդ ենթակետի համաձայն՝ ***<u>եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա</u>***

<u>նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:</u> Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:</u>***

Այսինքն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանվում են հստակ ժամկետներ պայմանագիրը ստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու համար, որոնք չպահպանելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ ուսումնասիրելով ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից սույն ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա փաստական հանգամանքների հետ՝ գտնում եմ, որ «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ն ըստ էության հրաժարվել է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/3» ծածկագրով պայմանագիրը կնքելուց և թույլ տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.02.2022թ. թիվ 26/26-1/2326-2022 գրությամբ «Սոֆթ թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ընկերությանն ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**